


Հաստատված է՝
«ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-ի
Խորհրդի 2016թ-ի փետրվարի 19-ի թիվ 19 նիստում
Քոլեջի խորհրդի նախագահ  Կ. Կուռոյան
«19» «02» 2016թ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ՀՆԳԱՄՅԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
(2016-2020ԹԹ)

Փետրվար 2016թ.

«ԳԱՎԱՌԻ ԱԿ. Ա.ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵԶ» ՊՈԱԿ-ի
2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Ներածություն

«Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ը /այսուհետ՝ Քոլեջ/ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում գործող գյուղատնտեսական և տարածաշրջանում պահանջարկ ունեցող այլ մասնագիտական կրթական ծրագրեր առաջարկող ուսումնական հաստատություն է, որի գործունեությունն ուղղված է պետական կրթական չափորոշի /այսուհետ՝ՊԿԶ/ և որակի ազգային շրջանակի /այսուհետ՝ ՈԱՇ/ 4-րդ և 5-րդ մակարդակների պահանջներին համապատասխան, միջին և նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական ծրագրերի իրականացմանը, որակյալ մասնագետների պատրաստմանն ու աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը:

2. Քոլեջի առաքելությունն է.

1. Տարածաշրջանի առանձնահատկությունների հաշվառմամբ գյուղատնտեսության՝ որպես առաջնահերթ ոլորտի, ինչպես նաև բիզնեսի, տրանսպորտային ծառայությունների, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների և այլ ոլորտների մասնագիտական կրթական ծրագրերի /այսուհետ՝ ՄԿԾ/ որակյալ իրականացումը, սովորողներին անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով, հմտություններով, արժեքային հատկանիշներով զինումը, մրցունակ և որակյալ մասնագետների պատրաստումը, ուսումնամեթոդական, դաստիարակչական, սոցիալ-մշակութային գործառույթների իրականացումը:
2. Գործատու սյուբեկտի պարտականությունների բարեխիղճ կատարումը, դասախոսների ու վարչատնտեսական աշխատակիցների, ինչպես նաև ուսանողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն:

3. Քոլեջի տեսլականն է.

1. Որակի մշակույթի ներդրումը և զարգացումը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, ՄԿԾ-ների իրականացման, ուսանողակենտրոն կրթական միջավայրի ձևավորման, ուսումնառության և դասավանդման արդյունավետ մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման, ուսանողների համակողմանի դաստիարակության ապահովման և Քոլեջի գործունեության այլ ոլորտներում:
2. Գեղարքունիքի մարզի ազգաբնակչության տարբեր շերտերի կրթական կարիքների բացահայտումը, դրան համապատասխան լրացուցիչ կրթական ծառայությունների նոր ցանկի մշակումն ու առաջարկումը, Քոլեջի միջազգայնացումը:

3. ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային զարգացմանը նպաստումը:

4. Քոլեջի գործունեության հիմնական սկզբունքներն են.

- 1) օրինականության,
- 2) ժողովրդավարության,
- 3) մարդու և քաղաքացու՝ միջին և նախնական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ապահովման,
- 4) միջին մասնագիտական կրթության մատչելիության,
- 5) կրթական գործընթացի թափանցիկության, հրապարակայնության,
- 6) դասախոսների, ուսանողների և այլ աշխատակիցների իրավունքի և օրինական շահերի պաշտպանության,
- 7) Քոլեջի միանձնյա և կոլեգիալ ղեկավարման սկզբունքների զուգակցման,
- 8) ուսանողական ինքնակառավարման խթանման,
- 9) Քոլեջի ինքնավարության,
- 10) ակադեմիական ազնվության,
- 11) կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության սկզբունքները:

5. Ռազմավարական հիմնախնդիրներ

Հիմնախնդիր 1.

Իրականացնել ՊԿՉ-ների և ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման ռազմավարություն՝ ժամանակի պահանջներին համապատասխան:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

1. Վերանայել կրթական ծրագրերը ՊԿՉ-ների պահանջներին համապատասխան:
2. Իրականացնել ՄԿԾ-ների ընթացքի ու արդյունքների մշտադիտարկում և շարունակական բարելավում:
3. Ուսումնասիրել աշխատաշուկայի պահանջները, գնահատել Քոլեջում ուսուցանվող մասնագիտությունների նկատմամբ շուկայական պահանջարկը:
4. Վերանայել և շարունակական թարմացնել ուսումնական պլաններում նախատեսված առարկայական և մոդուլային ծրագրերը:
5. Կիրառել դասավանդման ժամանակակից մեթոդներ և նորարարական կրթական տեխնոլոգիաներ:

Հիմնախնդիր 2.

Ներդնել և զարգացնել Քոլեջի որակի ներքին ապահովման համակարգ /այսուհետ՝ ՈՆԱՀ/:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

1. Կատարել կրթության որակի մշտադիտարկում, ինքնավերլուծություն՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով, բացահայտել ուսումնական գործընթացի ուժեղ և թույլ կողմերը, իրականացնել շարունակական ինքնավերլուծություն:
2. Ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը ՈԱ գործընթացներում և հետադարձ կապի ապահովում:
3. Անցկացնել հարցումներ ներքին և արտաքին շահառուների շրջանում՝ կրթության որակից բավարարվածության մակարդակը բացահայտելու նպատակով:

Հիմնախնդիր 3. Համալրել և բարելավել դասախոսական համակարգը:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

1. Շարունակել բարձրորակ մասնագետ դասախոսների ներգրավումը՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ, ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր:
2. Իրականացնել մարդկային ռեսուրսների նպատակային հավաքագրում, ընտրություն, ուղղորդում, գնահատել կատարողական արդյունքները և կիրառել պարզևատրման համակարգեր:
3. Բարձրացնել Քոլեջի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը:

Հիմնախնդիր 4. Ստեղծել գրավիչ կրթական միջավայր՝ ներքին շահակիցների արդյունավետ գործունեությունը խթանելու համար:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

1. Բարձրացնել Քոլեջի վարկանիշը՝ ի նպաստ դիմորդների ներգրավման:
2. Ապահովել նյութատեխնիկական բազայի առավել արդյունավետ օգտագործումը՝ ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման կատարելագործման նպատակով:
3. Բացահայտել ուսանողների կարիքները, վեր հանել նրանց խնդիրները և տալ պատշաճ լուծում:
4. Համալրել գրադարանի գրքային ֆոնդը, ձեռք բերել արդի գրականություն:
5. Բարձրացնել արտադրական պրակտիկաների անցկացման արդյունավետությունը:
6. Կազմակերպել Քոլեջի դասախոսների և ուսանողների հանրային սննդով և առողջարանային ծառայություններով ապահովելու հարցը:
7. Շարունակել բարելավել Քոլեջի շենքային պայմանները:

Հիմնախնդիր 5. Տրամադրել բարձրորակ և արդյունավետ ծառայություններ, որոնք միտված են ուսանողների կարիքների բավարարմանը:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

1. Մշակել ուսուցման տարբեր մոտեցումների և մեթոդների բավարարվածության գնահատման չափանիշներ և գնահատել ուսանողների բավարարվածությունը Քոլեջում ստացած կրթությունից:
2. Կատարելագործել և առավել արդյունավետ դարձնել պրակտիկաները, ընդլայնել հիմնական գործատու կազմակերպություններում ուսանողների՝ ուսուցմանը զուգահեռ պրակտիկ փորձառության հնարավորությունները:
3. Զարգացնել ուսանողների տեղեկատվական-խորհրդատվական, կարիերայի նախապատրաստման, աշխատատեղերի որոնման օժանդակության ծառայությունները:
4. Շարունակել Քոլեջի արտաքին կապերի համակողմանի զարգացման հզորացումը, էլ ավելի զարգացնել գործակցային կապերը աշխատաշուկայի՝ հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ:
5. Ակտիվացնել ուսանողական խորհրդի գործունեությունը, ապահովել նրանց ակտիվ դերը: Կազմակերպել բազմաբնույթ միջոցառումներ՝ սովորողների ռազմահայրենասիրական, քաղաքացիական, բարոյական, աշխատանքային, իրավական, ֆիզիկական, հոգևորմշակութային դաստիարակության նպատակով:

Հիմնախնդիր 6.

Զարգացնել Քոլեջի տեղեկատվական բազան՝ ապահովելով տեղեկատվական ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու մատչելիությունը:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

1. Ապահովել հասարակության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում Քոլեջի առավելագույնս ներգրավումը:
2. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը Քոլեջի ուսումնական գործընթացներում:
3. Վերանայել և կատարելագործել Քոլեջի փաստաթղթաշրջանառության և գործավարության համակարգը:
4. Լուսաբանել Քոլեջի գործունեությունը տարբեր սոցիալական կայքերի միջոցով:

Հիմնախնդիր 7.

Քոլեջի ֆինասական ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականության իրականացում:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

1. Ապահովել ֆինանսական կայունություն՝ բյուջեի հոսքերի ճշգրիտ պլանավորման և եկամուտների արդյունավետ օգտագործման միջոցով:
2. Շարունակել իրականացնել կարճաժամկետ դասընթացներ՝ առկա մասնագիտություններին ավելացնելով նորերը:

3. Կիրառել բազմախողովակ ֆինանսավորման կառուցակարգ, օգտագործել հովանավորների հնարավորությունները:
4. Այլ աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցները բաշխել ըստ առաջնահերթությունների:
5. Բարոյապես, բյուջեի հնարավորությունների սահմաններում նաև նյութապես, խրախուսել Քոլեջի բարեխիղճ աշխատակիցներին:

Հիմնախնդիր 8 .

Բարձրացնել կառավարման արդյունավետությունն ու վարչական ծառայությունների որակը:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

1. Շարունակել Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառույթների, լիազորությունների ու պատասխանատվությունների բաշխումը, ապահովել համագործակցված աշխատանքներ:
2. Զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ընդլայնել և խորացնել ուսանողների մասնակցությունը Քոլեջի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում, բարձրացնել կառավարման տարբեր մարմիններում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը:
3. Շարունակել ապահովել կառուցողական համագործակցության զարգացումը Քոլեջի կառավարման, ուսանողական, տնօրինական և այլ խորհուրդների միջև:

Բոլոր հիմնախնդիրները սահմանվել են Քոլեջի ընդհանուր զարգացման, առաքելության և նպատակների համատեքստում՝ վերևում բերված սկզբունքներին համահունչ: